



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Archbishop Toros Manougian, Primate

Թիւ 21711

Ապրիլ 10, 1969

Արժանաշնորհ
Տ. Մամբրէ Բհնյ. Գիպէտեան
Հովիւ Մօնթրէալի Հայց. Եկեղեցւոյ
եւ Սախազահ Ժիական Խորհուրդի
Մօնթրէալ.

Սիրելի Տէր Մամբրէ,

Սաացած ենք 2 Ապրիլ 1969 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Գանատայի Երջանի Առաջնորդի Փոխանորդ Գեր. Տ. Վաչէ Եզա. Յովսէփեանի նախագահութեամբ՝ Փետրուար 28ին գումարուած 2եր ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն լաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր ղեկանի անդամացանունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Սուրբ Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունելի

Տիարք՝ Հայկ Միսաքեան
Վահէ Բէթլի
Միսաք Աուսուլզեան
Յակոբ Թաւուրեան
Գէորգ Ժանգուլ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ